

Երեւոնեան այսպէս

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱՃՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



31 հուլիսի

Իտալիայի Հանրապետության Նախագահին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իտալիայի Հանրապետության Նախագահ Սերջիո Մատարելլային:

Ողջունելով բարձրաստիճան հյուրի այցը համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մշտեց, որ հայ-իտալական ժողովուրդների բարեկամությունն ունի պատմական խոր արմատներ: Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց, որ այսօր այդ բարեկամական կապերն առավել զարգանում եւ ամրապնդվում են երկու երկրների նախագահների սերտ գործակցության արդյունքում:

Եղբայրական հարաբերությունների խորացման գործում Վեհափառ Հայրապետը կարեւորեց Հայաստանայց Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների դերակատարությունը եւ շարունակվող ջերմ փոխհարաբերությունները:

Նորին Սրբությունը անդրադարձավ նաեւ Իտալիայում ձեւավորված հայ համայնքի կարեւոր առաքելությանը՝ փոխճանաչողության եւ հայ-իտալական բարեկամության զորացման գործում՝ ուրախությամբ ընդգծելով, որ այսօր եւս հայ հա-

մայնքն իր ակտիվ կյանքով շարունակում է երկու երկրների միջեւ կամուրջ հանդիսանալ:

Վեհափառ Հայրապետն իր երախտագիտությունը հայտնեց Իտալիայի իշխանություններին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման համար, նաեւ իր գնահատանքն արտահայտեց Իտալիայի նախագահին՝ դարաբաշխ հակամարտության խաղաղ կարգավորման հարցում երկրի իշխանությունների դրսեւորած հստակ կեցվածքի առնչությամբ:

Իսկ Իտալիայի նախագահը մշտեց, որ իր այցը Հայաստան խորհրդանշում է հայ-իտալական անցյալ, ներկա եւ ապագա բարեկամությունը՝ հաստատելով, որ ինչպէս անցյալում, այնպէս եւ այսօր կապերը շատ ջերմ են: Անդրադառնալով երկօրյա այցի արդյունքներին՝ պրն Սերջիո Մատարելլան հաստատեց, որ ունեցած հանդիպումները փաստեցին հայ-իտալական բարեկամության բարձր մակարդակը՝ տեղեկացնելով, որ ծրագրվում է հարաբերությունների ընդլայնում բոլոր ոլորտներում:

Խոսելով աշխարհում հակամարտությունների եւ մասնավորապէս Միջին Արեւելքում տեղ գտած զարգացումների մասին՝ պրն Սերջիո Մատարելլան կարեւորեց կրոնների միջեւ հարաբերությունները՝ իբրեւ աշխարհում խաղաղության հաստատման կարեւոր գործոն: Միջկրոնական երկխոսության սկզբնավորման գործում նաեւ կարեւորվեց Եկեղեցիների առաքելությունը: Այս համատեքստում Իտալիայի նախագահը շեշտեց, որ աշխարհը հավատքի մեն կարիք ունի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, անդրադառնալով կրոնական անհամոլութողականության երեւոյթին, մշտեց, որ այսօր՝ 21-րդ դարում, ցավոք, այն շարունակում է իր դրսեւորումներն ունենալ, խաթարել մարդկության ներդաշնակ համակեցությունը, խլել նաեւ մարդկային կյանքեր եւ ոչնչացնել մշակույթներ: Հայոց Հայրապետը հաստատեց, որ պետությունների ղեկավարների եւ տարբեր կրոնների առաջնորդների համատեղ ջանքերով է միայն հնարավոր հաղթահարել այդ երեւոյթները եւ խաղաղ ու բարօր աշխարհ կերտել:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր աղոթքն ու բարեմաղթանքները բերեց Իտալիայի նախագահին՝ հայցելով Աստծո ամենախնամ Աջի պահպանությունն ու օրհնությունը Իտալիայի բարեպաշտ ժողովրդին:

Հանդիպման ավարտին հյուրերն այցելեցին Մայր Աթոռի «Ալեք եւ Մարի Մանուկյան» գանձատուն, ծանոթացան թանգարանում ցուցադրվող ազգային-հոգեւոր արժեքներին եւ Հայոց Եկեղեցու տարբեր սրբություններին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Սանն Թանդիլյանին:

Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով նախարարին՝ մշտնական առիթով, նրան բերեց արդյունավետ աշխատանքի իր բարեմաղթանքները:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց սոցիալական ոլորտում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող ծրագրերին, մասնավորապէս՝ երեխաների պաշտպանությանն ուղղված խնամքի կենտրոններին:


Այս առնչությամբ քննարկվեցին նախարարության եւ Մայր Աթոռի սոցիալական ծառայությունների գրասենյակի միջեւ գործակցությանն առնչվող հարցեր:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ Եսայ Բաբայանը եւ սոցիալական ծառայությունների գրասենյակի տնօրեն Մարկոս քին. Մանգասարյանը:



21 օգոստոսի

ՏՈՆ ԾՆԵՂՅԱՆ ՓԱՐԵՓԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ



ՎԵՂԱՐԱՆՈՒՄ ՏԵՐ

Ի սրբե շնորհաւորում եւեք Ձերոյ Արքուպօստոլոսի՝ ծննդեան օրվա կապակցութեամբ եւ աղոթում, որ մեր Տեր Հիսուս Բրիսպոստր պափի-պափաքի, երկար ու անխռով կյանք շնորհի Ձեզ, Իր հայրական օրհնութեամբ ու սիրով լեցունք չիւրի Ձեր բոլոր գործերին ու ծրագրերին, բազմապարկի Ձեր ուժն ու եռանդը, իմաստութեանն ու հեռաբեւտութեանն, ողջանկութեանն ու ողջախոհութեանն: Մեր պարեմաւած հոգւերի ու դատնութեանն յարմար սրբի Իր անհայտնում իտաղարութեան լույսով, լեւրումի եւ գթասրտութեան Ձեր հայրական հանձնաւորն պարտւորի դարեւրի մեզ ապրող մեր Մուրք Եկեղեցու բրիսպոստաշունչ ինկարութեամբ: Թող Աստուած մեզ էլ հանձնաւոր դարձնի մեր մեղքերին եւ ապաշխարութեան քաղցրութեան պարգեւի, որպէսզի ի զորու յիւնեք Հայաստանայց Առաքելական մեր Եկեղեցու առաքելութեանն ու դերը արժեւորելու՝ դեպի Տերն ընթացող մեր կյանքի ճանապարհին Ձեր հայրապետութեամբ:

Պրոփանիս սիրով

Մարտիրոս ի համբոյր Ձերոյ օծեալ սուրբ ազոյն՝

«Քրիստոնյա Հայաստան» թերթի
խմբագրություն


ԱՍՏԾՈՆ ՏՈՒՆԸ

«Նոր պատվիրան եմ տալիս
ձեզ, որ սիրեք միմյանց.
ինչպես ես ձեզ սիրեցի, դուք էլ
միմյանց սիրեցեք»
(Յովհ. ԺԳ 34)

«Եկեղեցի» բառը տարբեր
նշանակությամբ է ընկալվում եւ
վերլուծվում: Այսպես՝ «Եկեղե-
ցի» ասելով՝ հաճախ հասկանում
ենք հոգեւոր համայնք՝ կազմված
հավատացյալներից, որոնց միա-
վորում է կրոնական պատկանե-
լությունը՝ առ Աստված ունեցած
քրիստոնեական հավատքը: Կամ՝
այս բառը գործածում ենք նյութե-
ղեն կառույցը, շինությունը, Տիրոջ
տաճարը մատանանշելու համար:

«Եկեղեցի» (հուն.՝ Εκκλησία)՝
նշանակում է «Տիրոջը պատկա-
նող...»: Սակայն քրիստոնեական
ավանդության ու եկեղեցագի-
տության մեջ առավել կիրառելի է
հունարեն «Εκκλησία» եզրույթը,
որը մեկնվում է որպես քրիստո-
նյա հավատացյալների հոգեւոր
հավաք, ժողով: «Եկեղեցի» բառի
ընկալումներն ու բացատրություն-
ները տարբեր են նաեւ Աստվա-
ծաշնչում, սակայն մեր նպատակն
ամենեւին էլ այս խնդրի լուսաբա-
նումը չէ, քանի որ վերջինիս վե-
րաբերյալ աստվածաբանական,
եկեղեցական բազմաթիվ ուսում-
նասիրություններ եւ աշխատու-
թյուններ են գրվել: Սույն հոդվա-
ծով փորձենք անդրադառնալ
Եկեղեցու՝ Աստծո տան խորհրդին
ու խորհրդաբանությանը:

Աստված մեզ՝ քրիստոնյաներիս
համար հայտնում է Եկեղեցուն՝ Իր
տան խորհուրդը. «Քեզ գրում եմ
այս բանը, որովհետեւ հույս ունեմ,



որ շուտով կգամ: Իսկ եթե ուշա-
նամ, դու կիմանաս, թե ինչպես
պետք է վարվես Աստծու տան
մեջ, որ կենդանի Աստծու եկեղե-
ցին է՝ սյուն եւ հաստատություն
ճշմարտության» (Տիմ. Գ 14-15):

Աստծո տուն՝ իրապես էլ բնա-
զանցական (մետաֆիզիկական)
խորհրդավորությամբ շղարշված,
սակայն մարդկային հոգուն ու
սրտին չափազանց հարազատ
մի վայր: Եվ որքան է նրա առ-
կայությունը երկրի վրա անհրա-
ժեշտ մեզ՝ մեղանշական արա-
րածներիս... Երբ տառապանքից
բզկտված, ամենօրյա պայքարից
ուժասպառ, ցավալիորեն հիաս-
թափված եւ հուսալքված ես, ան-
տուն դարձած հոգիդ ու խռովա-
հար սիրտդ քայլերդ ուղղում են
դեպի Տիրոջ տուն... Եվ այստեղ
է, որ զգում ես Բարձրյալի զորու-
թյունն ու ներկայությունը, այստեղ

ես Նրա անսահման ողորմածու-
թյամբ մխիթարվում եւ ներվում:
Առաքյալն ասում է. «Նրա տունը
մենք իսկ ենք, միայն թե վստա-
հությունը եւ հույսի պարծանքը
մինչեւ վերջ հաստատ պահենք...»
(Եբր. Գ 6): Այս իրողությունը, ան-
շուշտ, ջերմացնում եւ հույսով է
լցնում մեր մոլորյալ հոգիները:

Ըստ էության՝ այն զգացումն ու
միտքը, թե Գերբնականը ներկա
է նաեւ այս աշխարհում՝ որոշա-
կի վայրում, եւ մենք հենց այդտեղ
ապրում, զգում ենք Նրա ներկա-
յությունը, շունչն ու զորությունը,
ձեւավորվել են դեռեւս մարդկու-
թյան պատմության վաղ շրջանում:
Այսպես՝ հնագույն հավատալիք-
ներն ուսումնասիրելիս հստակ
նկատում ենք, որ մարդիկ ունեցել
են այն համոզումը, թե անդրանցա-
կան, գերբնական զորությունը նե-
րկա է որոշակի առարկաների, բույ-

սերի, կենդանիների մեջ կամ որոշ
վայրերում: Եվ այս իրողությունը
բնորոշ է մարդկության պատմու-
թյան գրեթե բոլոր շրջաններին:

«Աստծո տան» վերաբերյալ
վաղագույն պատկերացումները
ներկայացնող ուշագրավ վկայու-
թյուններ են հինկտակարանյան
տեղիները. օրինակ՝ «Նա երազ
տեսավ. երկրի վրա հաստատված
էր մի սամդուղը, որի ծայրը հաս-
նում էր երկինք, իսկ Աստծու հրեշ-
տակները դրանով էլնում իջնում
էին... Զարթնեց Դակորն իր քնից
ու ասաց. «Տերն այստեղ է, իսկ ես
չգիտեի»: Նա վախեցավ եւ ասաց.
«Սարսուռազդեցիկ է այս վայրը,
եւ սա այլ բան չէ, եթե ոչ Աստծու
տունը, իսկ սա էլ երկնքի դուռն է»
(Ծննդ. ԻԸ 12, 16-17):

Սուրբգրային բազմաթիվ հատ-
վածներում տաճար-սրբատե-
ղիներն անվանվում են «Աստծո
տուն»: Այս տեղիները հաստատում
են, որ երկրի վրա Տիրոջ տուն
կառուցելու հրահանգը մարդուն
տվել է հենց Ինքը՝ Աստված՝ հայտ-
նելով նաեւ դրա խորհուրդը՝ որ-
պես հանգստի վայր. «Երկինքն
Իմ աթոռն է, եւ երկիրը՝ Իմ ոտքե-
րի պատվանդանը: Ի՞նչ տուն պի-
տի շինեք Ինձ համար... Կամ Իմ
հանգստյան տեղը ինչպիսի՞ն պի-
տի լինի» (Ես. ԿԶ 1): Այսինքն՝ Աստ-
ված կամենում է երկրի վրա ունե-
նալ Իր տունը՝ որպես հանգստի
վայր, եւ այդ տունը Եկեղեցին է:

Պատմության տարբեր շրջա-
փուլերում Աստված Իր կամքը,
ուղիներն ու պատգամները մեզ
հայտնում է տվյալ ժամանա-
կին եւ միջավայրին բնորոշ ըն-
կալումներին, մտածելակերպին,

մշակութային ու բարոյական ար-
ժեհամակարգին առավել համա-
պատասխան եղանակներով եւ
միջոցներով: Աստվածային հայտ-
նությունը մեզ՝ արարածներիս հա-
մար առավել ընկալելի է առարկա-
յական պատկերների, նյութեղեն
խորհրդանիշների միջոցով. այս-
պես է նաեւ «Աստծո տան» պա-
րագայում...

Երկնային Զոր կամքն է երկ-
րի վրա տուն ունենալը. եթե Զին
Կտակարանում այդ տունը մաս-
նավորապես Տիրոջ տաճարն
էր, ապա Նոր Կտակարանում
պատկերն այլ է: Նոր Ուխտում
առաքյալները ցույց են տալիս
կենդանի տաճարը՝ բաղկացած
հավատացյալներից, որոնք մեղ-
քերի թողություն էին ստացել
Աստծո Որդու քալչարար զոհա-
բերությամբ:


Սովորաբար մենք՝ արարած-
ներս, մխիթարություն եւ խաղա-
ղություն ենք ակնկալում Արարչից,
հատկապես երբ երկրային կյանքը
լի է դժվարություններով ու խնդիր-
ներով... իրապես էլ մեր ալեկոծ
հոգիներն ունեն Տիրոջ մխիթա-
րության եւ խաղաղության կարի-
քը... Աստծո տունն այն վայրն է,
որտեղ տիրում են Նրա անսահ-
ման ողորմածությունից, սիրուց եւ
զորությունից բխող հանգիստն ու
խաղաղությունը. «Եկեք Ինձ մոտ,
բոլոր հոգնածներդ ու բեռնավոր-
վածներդ, եւ ես ձեզ կհանգստաց-
նեմ...» (Մատթ. ԺԱ 28): Ընդգծենք,
որ աստվածային այս խոստումը
չափազանց կարեւոր է տանջված
ու ամենօրյա պայքարից հոգնած
մարդու համար...

Շարունակությունը՝ էջ 4

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Նորած քահանաների հետ

Հուլիսի 30-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց սույն թվա-
կանի հունիսի 10-ին Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում
ձեռնադրված տասներկու քահանաների հետ՝ իր օրհնությունն ու հայ-
րական պատգամը բերելով եւ բարի առաքելություն մաղթելով նրանց՝
իրենց հովվական ծառայության մեջ: Հայոց Հովվապետը կատարեց
նաեւ նորած քահանաների հետագա ծառայության նշանակումները:

Գեւորգ քին. Ասատրյանը հոգեւոր ծառայության նշանակվեց Վի-
րահայոց թեմում, Գարեգին քին. Սարգսյանը՝ Շիրակի թեմում, Աբգար
քին. Աբգարյանն ու Զավեն քին. Հայրապետյանը՝ Ռուսաստանի եւ Նոր



Նախիջեւանի հայոց թեմում: Մեսրոպ քին. Խունդյանն ու Արամ քին.
Թիլիքյանը հովվական սպասավորության կոչվեցին Արցախի թեմում:
Անդրանիկ քին. Սարգսյանը ծառայության կնեկնի Գուգարաց թեմ,
Հովհաննես քին. Մաթեոսյանը, Սիմեոն քին. Հովհաննիսյանն ու Հա-
մազասպ քին.Հազեյանն իրենց ծառայությունը կշարունակեն ՀՀ ԶՈՒ
հոգեւոր առաջնորդությունում: Եզնիկ քին. Թորգոմյանը կսպասավորի
Ռումինիայի հայոց թեմում, Ավետիս քին. Մակարյանը՝ Հառիճի Թրբան-
ճյան հոգեւոր ընծայարանում:

Նորին Սրբությունը վերստին օրհնեց քահանաներին եւ նրանց ընծա-
յեց մասնատուփեր, ձեռնաց խաչեր ու «Մաշտոց» ծխարաններ:

Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Օգոստոսի 12-ին Հայաստանյայց Առաքելական Ս.
Եկեղեցին մեն շուքով նշեց Ս. Աստվածածնի Վերա-
փոխման տոնը: Այս բերկրա-
ռատ օրվա կապակցությամբ
միաձնաէջ Մայր տաճարում
մատուցվեց ս. Պատարագ:
Պատարագիչն էր Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի դիվանապետ Ար-
շակ եպս Խաչատրյանը:

Սրբազան հայրը, իր քարո-
զում անդրադառնալով տոնի
խորհրդին եւ սուրբ Աստվա-
ծածնի կերպարին, մեջբերեց
Ղուկաս ավետարանչի կող-
մից հիշատակված ու Մարիամ
Աստվածածնի կողմից արտա-
բերված խոսքերը. «Ահավասիկ
ես մնում եմ Տիրոջ աղախինը,
թող քո խոսքի համաձայն լինի

ինձ» (Ղուկ. Ա 38), եւ խոսեց այն բացառիկ խոնար-
հության եւ հնազանդության մասին, որ դրսևորել
էր սուրբ Կույսը Տիրոջ հանդեպ: Արշակ սրբազանն
ընդգծեց, որ մենք հնազանդ ենք Աստծուն՝ իրակա-
նացնելու այն առաքելությունը, որին կոչված ենք, եւ
որ Մարիամ Աստվածածինը հնազանդվեց Աստծուն,
որպեսզի լույս աշխարհի բերի Փրկչին:

«Մեր հավատքի հայրը՝ Գրիգոր Լուսավորիչը,
հնազանդվեց Աստծուն՝ քրիստոնեության լույսը Հա-
յոց աշխարհում տարածելու համար: Սուրբ Տրդատը
հնազանդվեց Աստծուն, որպեսզի դառնա հովանա-
վորը քրիստոնեությունը Հայաստանում տարածման,
Ավարայարի եւ Սարդարապատի քաջերը հնազանդ-
վեցին Աստծուն եւ զոհաբերեցին իրենց կյանքը՝
ի սեր քրիստոնեության եւ ի սեր հայրենիքի: Այդպի-
սի հնազանդություն էր նաեւ արցախյան ազատա-
մարտի տարիներին մեր քաջամարտիկների զոհո-
ղությունը, այդպիսի հնազանդություն է նաեւ այսօր
մեր ժողովրդի կողմից դրսևորված հավատարմու-
թյունն Աստծուն:

Շարունակությունը՝ էջ 3



ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ (1809-1848)

ԱՐՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ. ՆՐԱ ԲԵՐԱԾ ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Սկիզբը՝ թիվ 4-9, 11-12

Գրաբար-աշխարհաբար հարաբերության մասին Արովյանի կարծիքը մեկնաբանելիս թույլ է տրվում մի այլ ակնհայտ ծայրահեղություն: Ոմանք մեծ լուսավորչին ներկայացնում են որպես գրաբարի մոլի հակառակորդ ու կտրականապես մերժող, որը դարձյալ անցյալից եկող թյուրիմացության հետեանք է: Տարբեր առիթներով ասվել է եւ դեռ կասվի, որ Արովյանի համար աշխարհաբարը միջոց էր գրաբար «կորած գանձը» գտնելու ճանապարհին: «Երանի եմ սհաթին, որ մեր ազգը քիչ-քիչ կարողանա էս կորած գանձը գտնիլ ու իր լեզուն (գրաբարը - Ս. Մ.) սովորիլ, իմանալ: Բայց ի՞նչ չի գիտի, որ սրան շատ ժամանակ կուզի, ու մինչեւ էն ժամանակը մնալ, ի՞նչ գիտի, մարդ սաղ կմնա թե չէ»: Գրաբարի՝ 1841 թ. արովյանական այս աներկմիտ արժեւորումն այնքան է հստակ, որ որեւէ կասկածի կամ թյուրիմացության տեղ չի թողնում: Այս ճանապարհով պետք

էր կրթել ժողովրդին այնպես, որ նա ի վիճակի լինէր «իր կորած գանձը գտնելու» եւ մեր նախնիների՝ գրաբարով ստեղծած հոգեմտավոր ու գիտամշակութային ողջ ժառանգությունը յուրացնելու:

Նույնպիսի թյուրիմացության արդյունք է եւ Արովյանին կլասիցիզմի թշնամի ու նրան «ջախջախիչ հարված հասցնող» համարելը: Կլասիցիզմի դեմ որեւէ ուղղակի արտահայտություն չունի Արովյանը. նա պարզապես դժգոհ է եղել կրոնամիստիկական բովանդակությամբ գրականությունից: Այլ խնդիր է, որ նա ենթարկվել է կլասիցիզմից սենտիմենտալիզմին, ապա եւ ռոմանտիզմին ու ռեալիզմին անցման բնական օրինաչափություններին եւ, ի վերջո, հրաժարվել կլասիցիզմից, որի գեղագիտությանն ականա ենթարկվում էր վաղ շրջանի նախադրյալատյան եւ դորպատյան առաջին տարիների բանաստեղծություններում:

Խ. Արովյանն իրականում գրաբարի եւ կլասիցիզմի թշնամի չէր: Դեռ գրապաշարից էլ առաջ նա, հասարակական լայն խավերին գրագիտացնելու նպատակով, որպես միջանկյալ շրջան, լուսավորության ու կրթական գործն ուզում էր սկսել աշխարհաբարով, որի բառապաշարին, արտահայտչաձեւերին տիրապետում եւ որով հաղորդակցվում էր հայ հանրությունը:

Այս հանգամանքը դուր չէր գալիս ինքնահավան գրաբարամուլներին, որոնք բացարձակ մեծամասնությամբ հոգեւորականներ էին: Բայց Արովյանն էլ համոզված էր իր լեզվական քաղաքականության իրավացիության մեջ, ինչը հաստատեցին նաեւ հետագա տասնամյակների իրադարձությունները եւ գրապայքարում աշխարհաբարի հաղթանակը: Իսկ «Հառաջաբանում» գրաբարի մասին խիստ արտահայտություններն իրականում ուղղված էին գրաբարամուլներին, ովքեր չէին իջնում իրենց «գրագիտական բարձունքներից» եւ քայլ անում դեպի ժողովուրդը, հաշվի չէին մատում կենդանի հաղորդակցության լեզվի իրողությունների հետ: Այդ պատճառով է, որ Արովյանն իր լուսավորական ծրագրերը հայկական միջավայրում չէր կարող իրագործել, որովհետեւ «...բայց այն» լեզուն փակ էր, բերանս բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կարճ. գանձ չունեի, որ գործով ցույց տայի ուզածս, անունս մեծ չէր, որ ասածս տեղ հասնի, մեր գրքերն էլ գրաբառ, մեր մոր լեզուն էլ անպատիվ, որ սրտիս հասրաթը (կարոտ) խոսքով հայտնեի:

Շարունակությունը՝ էջ 5

Ս. Աստվածածնի Վերափոխման տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Սկիզբը՝ էջ 2

Երբ մենք ասում ենք, որ հավատարիմ ենք, Աստված, Քեզ, հնազանդ ենք Քեզ, մենք ո՛չ ենք ասում բոլոր այն օտարամուտ բարքերին ու սովորույթներին, այլասերված նորամուծություններին, որոնք բացարձակապես չեն տեղավորվում մեր հավատքի շրջանակներում եւ մեր հոգեւոր, կրոնական պատկերացումների մեջ: Եվ այսօր Աստվածածինն օգնության է եկել մեզ՝ իր հնազանդությամբ նորոգելու մեր հավատարմությունը, նորոգելու մեր ուխտը, որպեսզի

շարունակենք հնազանդ լինել Աստծուն, բայց նաեւ երբեւէ հանդուրժողականություն չդրսեւորենք այն արատների, այն մեղքերի, այն շեղումների նկատմամբ, որոնք կարող են տեղ գրավել մեր ազգային-եկեղեցական կյանքում»,- ասաց Արշակ սրբազանը:

Հավարտ ս. Պատարագի, հանդիսապետությամբ Նաթան արք. Հովհաննիսյանի, Ս. Տրդատի բաց խորանի վրա կատարվեց հաղորդօրհնեքի արարողությունը:

Վերջում օրհնված խաղողի ողկույզները բաժանվեցին հավատավոր ժողովրդին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգ

ԳԱՌՉՈՒ

Կյանքը եւ գործունեությունը

Աշխարհահռչակ հայազգի նկարիչ Գառզուն անգնահատելի ավանդ ունի համաշխարհային կերպարվեստում: Մինչեւ նրա գործունեության մասին խոսելը՝ հակիրճ ներկայացնենք կենսագրությունը: Գառզուն՝ նույն ինքը՝ Գառնիկ Չուկունյանը, ծնվել է 1907 թ. Սիրիայի Հալեպ քաղաքում: Պատանի հասակում ապագա նկարիչը տեղափոխվում է Փարիզ՝ ճարտարապետական դպրոցում ուսանելու նպատակով: Նրա նկարչական ընդունակությունները զարգացում են ապրել մի քանի նկարչական կրթարաններում: 1939 թ. Գառզուն կազմակերպեց իր առաջին անհատական ցուցահանդեսը: Վերջինիս շնորհիվ էլ արժանացավ համընդհանուր ճանաչման: Նշված ցուցահանդեսից հետո նկարչին ամենուր ընդունում էին մեծագույն սիրով: 1956 թ. նա արժանացավ Պատվո լեգեոնի ասպետական տիտղոսին, իսկ 70-ականների վերջերին ընտրվեց Ֆրանսիայի գեղեցիկ արվեստների ակադեմիայի անդամ: Սփյուռքահայ արվեստագետը մամուլային արժանացել է Ֆրանսիայի ազգային շքանշանին: Գառզունի ստացած պարգևների շարքը դեռ երկար կարելի է շարունակել, բայց այսքանից էլ ակնհայտ է, որ նկարիչը հիրավի մեծագույն ճանաչման է հասել թե՛ Ֆրանսիայում եւ թե՛ աշխարհում: Մեր հայրենակցի կտավները ցուցադրված են աշխարհի հայրուրավոր պատկերասրահներում: Հարկ է նշել, որ Գառզունի ամենահայտնի նկարչական շարքը, որը կոչվում է «Ապոկալիպսիս», ցուցադրված է Մարսելից ոչ հեռու գտնվող Մանուկ բնակավայրում, իսկ ավելի կոնկրետ՝ Ս. Սահակի եղեղեցում: Գառզուն հայտնի է եղել նաեւ որպես պատկերազարդող. նրա կտավներից շատերը զարդարում են ֆրանսիական փոստային դրոշմանիշները:

Յուրաքանչյուր նկարիչ արարում է իր աշխարհը, իր ուրույն տիեզերքը: Այդ աշխարհը թեւէ հիմնված է իրական զգացողությունների վրա, սակայն այն այլեւս իրական չէ, քանզի դրանում անհնար է ապրել: Աբստրակտ հասկացությունը կապված չէ որեւէ հոսանքի կամ ուղղության հետ: Այն կապված է բնօրինակի վերացականացման հետ: Բոլոր նկարիչները՝ սկսած մախադարյան քարանձավային նկարիչներից մինչեւ մեր օրերը, այն համոզմունքն ունեն, որ իրենք պիտի ստեղծեն իրենց տիեզերքը կամ իրենց միկրոաշխարհը, որը տարբերվում է շրջակա միջավայրից եւ արտաքինապես բնավ մնաց չէ իրական կյանքին:


Ուշագրավ է Գառզունի տեսակետն իր գործերնկերներից մեկի՝ Դեֆտանցի Վերմեյերի մասին. «Ըստ իմ՝ Վերմեյերի Դեֆտանցիին այն նկարիչներից է, ովքեր առավել հավատարիմ են մնում բնօրինակին, սակայն նա ամենեւին չի մամուսկում դրան: Եթե մենք վերարտադրենք նրա կտավներից մեկը, ճշգրտորեն վերաստեղծենք ֆոնը, զգեստավորենք նրա պատկերած բնորոշներին ու լուսանկարենք այդ ամենը, ապա մենք կդառնանք բնօրինակների լիակատար վերացականացման ականատեսը: Ես կարծում եմ, որ Վերմեյերն ավելի վերացական է, քան Մատիսը: «Իզմերը» եւ նկարչական ուղղությունները հայտնվում են ու չքանում տիեզերական արագությամբ: Ճարպիկ նկարիչները հասել են նրան, որ ստեղծում են իրենց գործերն առանց մեծ ջանքերի: Նրանք չեն կիրառում ո՛չ ներկեր, ո՛չ վրձիններ եւ ո՛չ էլ կտավ: Նման «արվեստը» դժվար թե հնարավոր լինի կերպարվեստ կոչելը:

Գառզունի՝ իբրեւ նկարչի կայացման գործում մեծ դեր է խաղացել Փարիզը: Ի դեպ, այս քաղաքը ստեղծագործական ոգեշնչման աղբյուր է հանդիսացել ոչ միայն մեր հայրենակցի, այլեւ Վան Գոգի, Մարկ Շագալի, Պաբլո Պիկասոյի եւ շատ այլ տաղանդավոր արվեստագետների համար:

Գառզունի պոետական քնարը թախծոտ

է ու մտախոհ: Չկարողանալով մխիթարություն գտնել շրջապատող իրականության մեջ՝ նկարիչը մտովին սլանում է դեպի հին ու բարի ժամանակները եւ հենց այստեղ է իդեալներ փնտրում: Անցյալի հիշողությունները մշտապես սփոփում էին Գառզունին: Նա իր ձգտումներով եւ մտածելակերպով ավելի մոտ է հին վարպետներին: Ճիշտ է՝ Գառզունի եւ ավագ սերնդի նկարիչների գործերի միջեւ ուղղակի նմանություն չկա, սակայն սա չի վերաբերում նրանց կտավների ընդհանուր մթնոլորտին:

Գառզունի պատկերած առեքիցը, ով նախում է դիմակի ճեղքերի արամբից, ինքնակենսագրական բնույթ ունի: Թվում է՝ կարծես ինքը՝ նկարիչն է սլանում հին դարաշրջաններ, հեռավոր երկրամասեր՝



թաքցնելով իր իրական հոգեվիճակը, իր զգացմունքներն ու ապրումները: Եվ այդ առեքից-Գառզուն, ով ապրում է գոթական դղյակում, առազաստանավով սլանում է դեպի անուրջների ծովախորշը, ապրում տեսիլքանման Վերսալում կամ ջրային թագավորության մայրաքաղաք Վենետիկում: Այս ամենը դիպչում է մեր սրտի ամենագալուն լարերին:

Գառզունի նկարներում զգացվում է նրա աշխարհայացքը: Նրա զարկերակը կարծես դարաշրջանի զարկերակը լինի: Գառզունի պատկերած առարկաների անհանգիստ, փշոտ ուրվագծերը նրա նկարներին հաղորդում են սրություն, դրանք առավել արտահայտիչ ու պատկերավոր են դարձնում: Նկարչական գծերի խիտ միահյուսումները ստեղծում են մի խիտ գրաֆիկական ցանց: Այդ քառասյան միահյուսման մեջ, այնուամենայնիվ, զգացվում են խիստ կոնստրուկտիվություն եւ արխիտեկտոնիկա:

Գառզունի աշխարհն անիրական է, այն հագեցած է առեղծվածով եւ հմայքով: Նկարչի ստեղծագործությունները կարծես անսովոր բեմականացումներ լինեն: Դրանցում առկա են յուրահատուկ պարագաներ՝ հնարարյան թնդանոթներ, հեքիաթային մավեր, ասպետական զրահներ, սակայն այս ամենը չի ընկալվում որպես ժամանակավորիպում, հին ժամանակների տեսարանների նկարազարդում: Ճիշտ հակառակը՝ Գառզունի նկարներն իրական կյանքի զգացողություն են առաջացնում: Բավական է մի փոքր բացել վարագույրը, եւ մարդը կարող է հայտնվել մի հիասքանչ կոզու վրա, քիչ մեկուսանալ եւ որոշ ժամանակ ազատվել արդի կյանքի թոկոսներից ու աղմուկից:

Գառզունի մասին ուշագրավ տեսակետ է հայտնել արվեստաբան Հենրիկ Իգիթյանը. «Գառզուն, ում ստեղծագործությունների մեջ պարզեցված ոճավորված երեւակայությունը ներդաշնակվում է սյուրռեալիզմի սքոլված մտահղացումների հետ, անընդհատ հիշեցնում է տարածության մասին: Նկարչին անընդհատ տանջում է փակված դուռը բացելու միտքը»:

Շարունակությունը՝ էջ 6

Սսի 1243 թ. Բ Ժողովն ու կանոնները

Սկիզբը՝ թիվ 9-12, 14

Քահանայական կանոններ

Բարոյական կանոններին հաջորդում են մի քանի կետեր, որոնք հատկապես վերաբերում են քահանաների կենցաղին և պարտավորություններին:


ԺԹ. «Այս քահանան, որ եկեղեցական գործից զատ այլ գործով է զբաղվում՝ գրագրություն կամ որսորդություն, ժողովրդի ծխերը խլում են նրանից. նմանապես պետք է վարվել անուսում քահանաների հետ, մինչև որ լավ սովորեն. անարժանավորներից նույնպես պետք է առնեն ժողովրդին» (Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում):

Կանոնից պարզ է դառնում, որ քահանաներին արգելվում էր, եկեղեցականից զատ, այլ գործեր կատարել, ինչպես օրինակ՝ գրագրությունը կամ որսորդությունը: Բնականաբար, եթե մարդը որոշում է ծառայել Աստծուն եւ դառնալ հոգեւորական, պետք է հաստատ լինի իր որոշման մեջ եւ ուրիշ գործերով չզբաղվի, քանի որ Աստծուն ծառայելն ինքնին շատ բարդ աշխատանք է: Եվ դրա հետ մեկտեղ այլ գործով զբաղվելը թերի կդարձնի Աստծուն ծառայելու սրբազան առաքելությունը: Կամ եթե խոսում ենք որսորդության մասին, պարզ է դառնում, որ քահանան տեղի է տվել իր ցանկասիրությանը եւ զբաղվել իր անձին հաճելի գործով: Բայց եթե մենք դիտարկենք այն իր ողջ խորության մեջ, միանշանակ է դառնում այն փաստը, որ որսորդությունը ոչ այլ ինչ է, քան սպանություն: Եվ ինչպես մեզ քաջ հայտնի է

Հին Կտականում հիշատակված Տասնաբանյայից, արգելվում է սպանությունը վեցերորդ պատվիրանով (Ելից Ի 13): Կանոնը կրկին հիշատակում է անուսում քահանաներին, որոնց մասին խոսվում էր նաեւ վերոնշյալ կանոններում: Սա եւս մեկ անգամ փաստում է, որ շատ կարեւոր է եղել քահանաների գրագիտությունը եւ արժանի կերպով իրենց աստիճանը զբաղեցնելը: Այս կանոնը խախտողներից խվում էին ժողովրդի ծխերը:

Ի. «Քահանան տարին մեկ անգամ եկեղեցում պետք է հավաքի տղամարդկանց առանձին ու կանանց առանձին եւ կույս աղջիկներին զատ, տղաներին ու փոքրերին զատ եւ ըստ պատշաճի խրատի աղաչանքով ու սաստով. եւ իմանա յուրաքանչյուրի վարքի մասին ու մշտապես դիտի: Եթե ինքը չի կարող, այլ կատարողի ձեռքով պետք է անի, ինչպես որ Աթանասը իր կանոնների մեջ ասում է» (Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում):


Եկեղեցին, լինելով բոլոր ժամանակների շատ հզոր կառույց, միշտ իր վրա է վերցրել շատ լուրջ ու պատասխանատու խնդիրների լուծումը: Բացի դրանից, ստանձնել է նաեւ քաղաքական գործառնություններ՝ ելնելով պահի հրատապությունից: Բնականաբար զբաղվել է մարդկանց հոգեւոր դաստիարակությամբ, որի շատ կարեւոր մասն են կազմել մարդկանց բարոյական դաստիարակումն ու կրթումը: Բացի դրանից, քահանան իբրեւ իր համայնքի ղեկավար, պարտավոր էր իմանալ յուրաքանչյուր քրիստոնյա զավակի վարքի մասին:



Դա իմանալով՝ նա մշտապես պարտավոր էր հետեւել դրան եւ հարկ եղած դեպքում սաստել նրանց ու բերել ճշմարիտ ճանապարհի: Եթե փորձենք այս ամենը դիտել իր խորության մեջ, պարզ կդառնա, որ դա քահանայի շատ կարեւոր գործառնություններից մեկն էր, որը նա պետք է կատարել խղճով եւ մեծ պատասխանատվությամբ: Սակայն պարզ է մի բան. եթե կանոնը դրված է Սսի Բ ժողովի որոշումների շարքում, ուրեմն քահանաները մոռացության են տվել այս շատ լուրջ ու կարեւոր խնդիրը: Եվ այս կանոնն էլ կարծես հիշեցում էր քահանաներին՝ կատարել իրենց մի շատ կարեւոր ծառայությունը: Հետաքրքրական է այն փաստը, որ քահանան պետք է հան-

դիպեր մարդկանց առանձին խմբերի հետ, որոնք ենթադրում են նաեւ սեռահասնության որեւէ տարիք: Եվ քահանան պետք է ճիշտ խորհուրդներ տար եւ կարողանար պատասխանել բոլորին հուզող հարցերին, որոնք կարող էին լինել տարբեր բնագավառներից՝ հոգեւորից մինչև մարդու վարքին վերաբերող տարաբնույթ հարցեր: Նախ մեզ համար պարզ է, որ քահանան, հնարավոր է՝ հանգամանքների բերումով, չհասցներ հանդիպել իր ժողովրդին: Բայց կանոնը հեշտորեն լուծում է այս խնդիրը՝ սահմանելով, որ եթե նա ինքը չի կարող դա անել, պետք է ուրիշ մեկին կարգադրի այդ գործը կատարել:

Շարունակությունը՝ էջ 7



ԱՍԾԾՈՒ ՏՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 2

Թերեւս փիլիսոփայական որեւէ ուղղություն կամ կրոնական հավատալիք չի անդրադարձել այս կարեւորագույն խնդրին: Փիլիսոփայական համակարգերը, ինչպես նաեւ կրոնական ուսմունքները բավականին բարդ, անընկալելի ու խիստ միջոցներ էին առաջարկում մարդու հոգեւոր խաղաղությունը վերադարձնելու համար: Վերջիններս միայն ներկայացնում են որոշակի համակարգ՝ բաղկացած կանոններից, մինչդեռ քրիստոնեության դեպքում Փրկիչն Ինքը պարզապես հորդորում է իր մոտ գալ... եւ սա առանց նախապայմանի ու սահմանափակումների:

Հստակեցնենք մեկ հարց եւս՝ ի՞նչ նկատի ունի Քրիստոս՝ ասելով «Եկեք Ինձ մոտ...», ի՞նչ պետք է գնա մարդը... Աստծո Որդու երկրային կյանքի ընթացքում մարդիկ ամենուրու հետեւում էին Նրան, իսկ այսօր, երբ Նա բազմել է Հոր աջ կողմում, որտեղ պետք է գտնենք Նրան... իհարկե, Իր Հոր տանը, որ է՝ Եկեղեցին:

Մարդ արարածը եւս, եթե սիրում ու վստահում է մեկին, նրան իր տուն է հրավիրում: Աստված սիրում է Իր պատկերով ու նմանությամբ արարված մարդ էակին, ուստի նրան Իր տուն է հրավիրում, այնինչ՝ այս աշխարհը, որ տառապանքի ալեծուխ ծով է,

խաղաղ մավահանգիստ չունի մարդկային հոգու համար: Այն տանը, ուր հրավիրում է Քրիստոս, «հոգնածներն ու բեռնավորվածները» կարող են գտնել Տիրոջ խաղաղությունը: Ներելով ու մխիթարելով մարդուն, վիրակապելով նրա հոգու եւ սրտի արմատիսող վերքերը՝ Աստված հաստատում է Իր խաղաղության բարեբեր իշխանությունը երկրի վրա: Այս մասին Փրկիչն ասում է. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ձեզ չեմ տալիս այնպես, ինչպես այս աշխարհն է տալիս. ձեր սրտերը թող չխռովվեն, եւ չվախենանք...» (Հովհ. ԺԴ 27): Այսպիսով, Քրիստոս Իր տանը՝ Եկեղեցում, խաղաղություն թողեց... եւ սա այն խաղաղությունն ու հանգիստն է, որի կարիքն անհուսալիորեն զգում է մեղքերի մեջ բաթախված, հոգեպես ամեն օր մահացող մարդը: Սա եւս երկնային Հոր սիրտ մի կարեւորագույն արտահայտություն է՝ հայտնված Նրա Որդու միջոցով: Աստված կամենում է հենց այդ սերը տեսնել մեր կյանքում: Ըստ էության՝ անուղղակիորեն բոլորս էլ Նրա սերն ենք փնտրում, սակայն առանց աստվածային առաջնորդող լույսի, առանց Նրա հրավերի, բոլոր ջանքերն ու փնտրտուքներն ունայն են: Այս ամուսնով Եկեղեցին հստակ պետք է կյանքի կոչի իր առաքելության ու պատասխանատ-

վության բացարձակ ճշմարտությունն այս աշխարհում, քանզի աստվածային անսահման սիրտ եւ մեղանչող մարդու հանդիպման վայրն է, որտեղ պետք է «սիրենք միմյանց, քանի որ սերն Աստծուց է. եւ ամեն ոք, ով սիրում է, Աստծուց է ծնված եւ ճանաչում է Նրան» (հմմտ. Ա Հովհ. Գ 7):

Հովհաննես առաքյալն ասում է. «...քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը...» (Հովհ. Գ 16): Ուստի, Միածին փրկչական զոհաբերությունից հետո այս աշխարհում պետք է լինեի այնպիսի վայր, որտեղ հավատացյալը առանձնակիորեն կզգար տիրախնամ սերը: Այդ վայրը Աստծո տունն է՝ Եկեղեցին. «Տեսե՛ք ինչպիսի սեր շնորհեց մեզ Հայրը, որպեսզի մենք կոչվենք Աստծու որդիներ...» (Ա Հովհ. Գ 1):

Տերը սիրեց մարդուն եւ այդ սերը Սուրբ Հոգու միջոցով սփռեց մեր սրտերում (հմմտ. Հռոմ. Ե 5): Այսպիսով, երբ մարդը մտնում է Աստծո տուն՝ Եկեղեցի, անմիջապես զգում է երկնային Հոր սերը. Եկեղեցին աստվածային սիրտ հայտնության եւ սխալական մահկանացուի՝ այդ անսպառ սիրտ հետ հաղորդության վայրն է, որտեղից հեռանալուց հետո մեր լույսը պետք է փայլի մարդկանց առջեւ, որպեսզի տեսնեն մեր բարի գործերն ու փառավորեն մեր Հորը, որ երկնքում է (հմմտ. Մատթ. Ե 16):

Մտաբերենք Անառակ որդու առակը (Հովհ. ԺԵ). Հոր անսպառ սիրտ, ողորմածության առավել դիպուկ նկարագրություն դժվար թե գտնենք... Երբ կրկին ու կրկին ընթերցում ենք այս առակը, չափազանց կարեւոր մի իրողություն ենք ընկալում. իրականում հայրն է տառապում, ցավալիորեն կորցնում, անհուսորեն սպասում վերադարձին մոլորյալ զավակի, ուն հենց ինքն էր սեփական ուղին ընտրելու հնարավորություն տվել: Ուշադրություն դարձնենք հետեւյալ հատվածին. «Եվ Որդին ասաց նրան. «Հայր, մեղանչեցի երկնքի դեմ եւ քո առաջ, այլեւս արժանի չեմ քո որդին կոչվելու»: Հայրը իր ծառաներին ասաց. «Ամմիջապես հանեցե՛ք նրա նախկին պատմուճանը եւ հագցրե՛ք նրան, մատանին նրա մատը դրե՛ք եւ նրա ոտքերին՝ կոշիկներ...» (Հովհ. ԺԵ 21-22): Պատմությունից հայտնի է, որ պատմուճանը, մատանին ու կոշիկները պատկանում էին որդիներին՝ ժառանգներին, այլ ոչ՝ ծառաներին: Նոր պատմուճան հագցնելով՝ Աստված ծածկում է Իր զավակի մեղանչական մերկությունը, նրան

ապաշխարանքի ու արդարացման հնարավորություն տալիս: Հայրը որդուն տալիս է նաեւ հավիտենության ժառանգորդը լինելու իրավունք (ինչը եւ խորհրդանշում է մատանին): Կոշիկը, թերեւս, խորհրդանշում է անառակ որդու նոր ընթացքը, նորոգված հարաբերությունները հոր հետ:

Մյուս իրողությունը, որ կապված է Աստծո տան հետ, ընտանեկան ջերմության զգացումն է. չէ՞ որ սովորաբար տունն այն վայրն է, որտեղ ապրում են քո հարազատները: Նմանապես եւ Աստծո տանը՝ Եկեղեցում, ներկա է գտնվում մի մեծ ընտանիք, որի անդամները կապված են մեկ կյանքով (քրիստոնեական), մեկ հավատով, մեկ մկրտությամբ եւ մեկ Աստծո սիրով: Այս մասին Աստվածաշունչն ասում է. «...մեկ մարմին եւ մեկ հոգի, ինչպես որ մեկ է ձեր հույսը, որին Աստված կոչեց մեզ: Մեկ Տեր կա, մեկ հավատ, մեկ մկրտություն, մեկ Աստված, Հայր բոլորի...» (Եփ. Գ 4-6): Տերն առաքյալների միջոցով պատվիրում է, որ Իր ընտանիքում հաստատվեն առանձնահատուկ հարաբերություններ. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց. ինչպես ես ձեզ սիրեցի, դուք էլ միմյանց սիրեցե՛ք...» (Հովհ. ԺԳ 34): Այսպիսով, Աստծո տունը՝ Եկեղեցին, այն վայրն է, որտեղ ապրում ենք Տիրոջ սերը, հաղորդվում Նրա հետ, հաղորդակցվում քրիստոնեական մեծ ընտանիքի մեր քույրերի ու եղբայրների հետ, այստեղ աստվածային ողորմածությունն է հորդում: Աստծո պատվիրանները պետք է իրագործվեն Իր ընտանիքում՝ «...պատվե՛ք ձեր հորն ու մորը» (հմմտ. Ծննդ. Ի 12), «...եղբայրասիրության մեջ՝ միմյանց հանդեպ եղե՛ք գթասիրտ...» (հմմտ. Հռոմ. ԺԲ 10), «...միմյանց հետ եղե՛ք քաղցր, գթած՝ ներելով միմյանց, ինչպես որ Աստված ներեց մեզ Քրիստոսով» (Եփ. Գ 32):

Եկեղեցում բոլորս էլ Աստծո որդիներ ենք՝ հավատով ի Քրիստոս (հմմտ. Գաղ. Գ 27-28), եւ այստեղ որեւէ խտրություն չկա: Եկեղեցին նաեւ Աստծո փառաց տունն է. Աստված կամենում է նրա միջոցով հայտնել եւ մեզ հաղորդակից դարձնել Իր անսահման փառքին (հմմտ. Հռոմ. Ը):

Պահենք եւ պահպանենք Աստծո տունը, որտեղ իշխում են սերը, հույսը, խոնարհությունը, ներողամտությունն ու աստվածային լույսը, քանզի մեր Տեր Հիսուս Քրիստոս կանչում է մեզ՝ «Եկե՛ք Ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, եւ ես ձեզ կհանգստացնեմ...»:

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ «ԻՄ ԿՅԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ղազարոս Աղայանի գրական ժառանգության մեջ ուշագրավ է նաեւ հուշագրությունը, որն իր գաղափարագեղագիտական արժանիքներով նոր որակ հաղորդեց ժանրի զարգացման ընթացքին:

Հուշագրության ժանրի առաջին դրսևորումները նկատվել են դեռևս անտիկ մտածողների գործերում, երբ հեղինակները՝ որպես ականատես-հուշագրողներ, ներկայացնում էին ժամանակաշրջանի պատմությունը, նշանավոր մարդկանց հետ կապված դեպքերն ու իրադարձությունները: Հուշագրության մեջ արտացոլվում է ոչ միայն սոցիումը, այլև նույն ժամանակաշրջանի գրական կյանքն ու գեղարվեստական մտքի շարժումները: Դեռևս դրանով էլ վավերական այդ երկերն արժեւորվում են որպես գրական-գեղարվեստական մտքի ուրույն պատումներ: Ասել է թե՛ հուշագրությունը, որպես փաստագրության յուրօրինակ դրսևորում, կարելիություն է ձեռք բերում ժամանակակից գրական-գեղարվեստական գործընթացի կայացման մեջ: Այս ժանրատեսակը միտված չէ դեպի կերպարաստեղծում, չունի վիպական հերոսներ, ավանդական դիպաշար, իսկ հեղինակային նարատիվը էլ համեմատաբար քիչ է

օգտագործում գեղարվեստական պատկերավորման միջոցներ ու հնարքներ:


Հուշագրության ժանրի առաջին նմուշներն արեւելահայ գրականության մեջ երևան են եկել 18-րդ դարի վերջերից: Հիշատակելի են հատկապես Հովսեփ Էմինի «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները» (1792), Հարություն Արարատյանի «Հարություն Արարատյանի կյանքը» (1813), Խաչատուր Աբովյանի «Դորպատյան օրագրերը» (1830-35), Մեսրոպ Թաղիադյանի «Ծանապարհորդութիւն ի Հայս» (1847) եւ հուշագրական ուրիշ երկեր, որոնք փաստում են, որ այդ ժանրատեսակը բուռն զարգացում էր ապրում հայ նոր գրականության համապատկերում:

1893 թ. «Սուրճ» ամսագրում տպագրվում է Ղազարոս Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրական երկը, որը համապարփակ տեղեկություններ է բովանդակում թե՛ հեղինակի կյանքի, թե՛ հայկական իրականության եւ թե՛ գրական-մշակութային անցումադարձերի վերաբերյալ: Ի դեպ, Ղ. Աղայանի եւ մասնավորապես հիշյալ գործի մասին բանասիրությունն արդեն երկար տասնամյակներ պահպանում է անբացատրելի լռություն, եւ սույն հոդվածի նպատակն է հայ ընթերցողին վերստին հիշեցնել հիրավի

տաղանդաշատ այս գրողի ու նրա գրական ժառանգության մեջ ուրույն տեղ զբաղեցնող հուշագրական ստեղծագործության մասին:

Ժանրային նախաշաղկի առանձնահատկությունները

Դիտելի է, որ Ղազարոս Աղայանից հետո եւս մի նշանավոր վիպասան՝ Պերճ Պռոշյանը, 1894-ին տպագրեց հուշերի սեփական պատառիկները՝ «Հուշիկներ» ընդհանուր խորագրով, որի առաջաբանում նա ներկայացրեց ինքնակենսագրություն գրելու իր շարժառիթը: «Փութացրեց ինձ մանավանդ դարուս նշանավոր մատենագիր Մեսրոպ Թաղիադյանի կենսագրությունը հայր Հովհաննես Մկրյանի աշխատասիրությամբ» (Պռոշյան Պ., *Երկերի ժողովածու յոթ հատորով*, հ. 7, եր., 1964, էջ 210),- խոստովանում է վիպասանը: Դրանից հետո մանուկան ծայր առան տարաբնույթ ըմբարկումներ: «Մշակի» էջերում Պռոշյանի երկերի մասին հայտնվեցին աննպաստ, ավելին՝ երբեմն բացահայտ թշնամանքի բնույթ պարունակող կարծիքներ: «Մշակի» մի հոդվածագիր, օրինակ, նկատում էր, որ Աղայանն առաջինն է տպագրել «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրությունը, եւ նրան է պատկանում ժանրը սկզբնավորողի առաջ-



նությունը. «Ինքնակենսագրություն գրելը այս վերջին ձեռով բոլորովին նոր երեւոյթ է հանդիսանում մեր գրականության մեջ. այդ փորձի անմասնաձեռի պատիվը պատկանում է մեր շնորհալի վիպագրող Ղազարոս Աղայանին, որի դափնիները, երեւի, հանգստություն չեն տվել Պերճ Պռոշյանին...» («Մշակ», լրագիր, Թիֆլիս, 1894, հոկտեմբերի 15, թիվ 119, էջ 1):

Շարունակությունը՝ էջ 7

ԽԱԶԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ (1809-1848) ԱՐՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ. ՆՐԱ ԲԵՐԱԾ ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սկզբը՝ էջ 3

Հրամայել էլի կարող, խնդրեի, աղաչեի էլ՝ լեզուս մարդ չէր իմանալ, չունքի (քանի որ, որովհետեւ) ես էլ էի ուզում՝ որ ինձ վրա չծիծաղին, չասեն՝ կոպիտ ա, հիմար ա, որ քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն չգիտի, ես էլ էի ուզում, որ ասեն. «Ո՛հ, էնպես խորը, խրթին շարադրել գիտի, որ սատանան էլ միջիցը մեկ բառ չի կարող իմանալ, հասկանալ», ես էլ էի ուզում, որ իմ գլուխս ցույց տամ, որ իմ վրա զարմանան, ինձ գովեն, թե՛ «Հայերեն շատ խորը տեղյակ եմ»: Ով մեկ լեզու գիտի, ես մեկ քանիսը գիտեմ. ինչ գիրք ասես՝ որ չեմ սկսել թարգմանիլ ու կիսատ թողալ, ոտանավոր, շարադրություն հո՛ւ էնքան եմ գրաբառ գլխիցս դուս տվել, որ մեկ մեծ գիրք էլ էն կդառնա» (Աբովյան Խ., *Երկերի լիակատար ժողովածու*, ութ հատորով, ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. 4, Ե., 1948, էջ 2):

Ավելի ցավալի էր այն իրողությունը, որ նոր սերունդը հայերեն գրաբար գրքերը չէր հասկանում. «Սիրտս ուզում էր պատռի, որ ես երեխեքանց ձեռքին էլ ինչ հայի գիրք տալիս էի՝ չէին հասկանում: Ռուսի, Նեմեցի, Ֆրանցուզի լեզվումը ինչ բան որ կարդում էին՝ նրանց անմեղ հոգում էն էին՝ էնպես բաները դուր գալիս: Ուզում էի շատ անգամ մագերս պոկեմ, որ եմ օտար լեզուքը ավելի էին սիրում, քանց մերը: Բայց պատճառը բնական էր,- շարունակել է Աբովյանը,- էն լեզվըներումը նրանք կարդում էին երեւելի մարդկանց գործերը, նրանց արածներն ու ասածները, նրանք կարդում էին էն բաները, որ մարդի սիրտ կարող էին գրավել, չունքի սրտի բաներ էին» (նույն տեղում):

«Էլ ընչի՞վ քո լեզուն երեխին սիրել տաս».- այս անկեղծ խոստովանությունն էլ վերահաստատում է, որ Աբովյանը նույնիսկ «խոր ու խրթին» գրաբարով առաջներում գրել էր եւ էլի կարող էր գրել: Մինչդեռ նա նպատակադրված, «տրամաբանություն, քերականություն ծալելով ու մեկ կողմ դնելով», գրում էր ոչ թե «վերին տասը հազարին»



դուր գալու, այլ «հարիր հազարին» հասկանալի լեզվով: Նա, իհարկե, մաքուր գրական արեւելահայերենով էլ է գրել, սակայն գերադասել է ժողովրդին ուղղված իր գլխավոր երկի «Հառաջաբանն» էլ, երեք գլուխներն էլ գրել ժողովրդին մատչելի եւ ընկալելի լեզվով, հասկանալի բարբառով այնպես, ինչպես «հարեւանը կխոսի հարեւանի հետ»: Ուրեմն՝ արարատյան բարբառի Քանաքեռի խոսվածքով գրելը Աբովյանի համար ոչ թե քմահաճույքի, անձնական նեղ հետաքրքր-մանսիրության կամ արկածախնդրության դրսևորում էր, այլ դեպի ժողովրդական


տարերքը գնալու հստակ լեզվական ծրագիր ու քաղաքականություն: Ու երբ «Վերջ Հայաստանի» վեպի աշխարհաբարով շարադրանքում ստեղծագործական լիակատար ազատության մեջ զգում, տեսնում է իր մտքի ազատ ճախրանքը, նոր սկսում է հասկանալ, որ գրաբար եւ ուրիշ լեզուները կաշկանդել, «բխովել» էին Խ. Աբովյանի միտքը, որ տեսնում էր լեզվական կատարյալ ազատության, որով կարողանար արտահայտել սրտի ուզածը: Ուրեմն՝ լեզուն եւ սրտի ուզածն անխզելի միասնություն են, խստագույն անհաժեշտություն՝ ազգային նկարագրի պահպանման համար: Պատահական չէ, որ Խ. Աբովյանը թե՛ «Հառաջաբանում», թե՛ վեպի ամբողջ ընթացքում երբեմն ընդհատում է պատումը եւ քննարկական շեղումներով իր խորհրդածություններն անում ազգային լեզվի ու նրա կարելորագույն նշանակության մասին: «Ա՛խ, լեզուն, լեզուն, լեզուն էլ որ չլի, մարդ ինչի՞ն՞ մեծան կլի: Մեկ ազգին պահողը, իրար միացնողը լեզուն ա ու հավատը: Լեզուդ փոխիր, հավատդ ուրաջիր, էլ ընչի՞վ կարես ասիլ, թե՛ դր ազգիցն ես» (նույն տեղում, էջ 63): Կողմնակից էր մեկից ավելի լեզուներ իմանալուն եւ միտքը մայրենիով հստակ արտահայտելուն, բայց վճռաբար դեմ էր լեզվախառնուրդին, մեր մայրենին ուրիշ լեզվի բառերով տգեղացնելուն ու անհամայնացնելուն: Խառնալեզուն, ըստ Աբովյանի, նույնն է, թե «սիրեկան խաշին ձուկը, շաքարեղեն, չամիչ» խառնելը:

Քաղքենի երիտասարդների ո՛չ հայերեն, ո՛չ ռուսերեն մի անճաշակ խառնաշփոթ նա արժանացնում է մտերմական ծաղրի. «Ախր որ ասում ես փրաքուլիվաթսա արի, սքուչ-նա եմ, օփիժաթսա էլա, փորոշնի տվի, սա-նյաթիե շատ ունիմ գլուխս քրուժիթսա էլալ, փեզչեսթի մարդ ա, ռազփոյնիք ա, գնանք քուպաթսա ըլիք, ճամփին ֆեսթի ութփ-նո ա, շատ խլովիթս սլուչիթսա չի՛ ըլում եւ այլն: Աչքիս լիս, մի մտածիր, թե լսողն ի՞նչ կասի»: Ահա ինչու էր նա հայոց նորահաս երիտասարդությանը պատգամում սովորել «տասը եւ ավելի» լեզուներ, բայց մայրենի լեզուն ամուր պահել. «Ձեզ եմ ասում ձեզ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անու-մին մեռնիմ, ձեր արեւին ղուրբան. տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք» (նույն տեղում, էջ 83-84):

Նոր գրականության համար անհրաժեշտ մյուս հիմնախնդիրը, որ «Հառաջաբանում» առաջադրել ու վիպական բուն շարադրանքում ցուցադրելով լուծել է Խ. Աբովյանը, լեզվին սերտորեն առնչակից՝ բովանդակության ու գեղագիտական ճաշակի խնդիրն է:

Մեր գրականությունից կարծես վտարված է եղել ժողովրդական տարերքի, բնական կյանքի պատկերումը: Ինչպես արդեն տեսանք, Խ. Աբովյանին նախորդած գրողներից ոչ ոք նպատակ չի դրել արծարծելու այնպիսի գաղափարներ ու թեմաներ, ինչպիսիք են սերը, ծնողը, զավակը, հայրենիքը, կռիվը, կյանքը, մահը: Մեր եղած գրաբարալեզու գրականությունը չունեցրեց գաղափարական ու գեղագիտական նման նպատակադրումներ ու միտումներ, մեր ողջ ունեցածը եկեղեցու մասին էր: Բայց միայն ասածում ու եկեղեցուն փառաբանելով, սրբերին ու հրեշտակներին վերացականորեն տարփողելով՝ հնարավոր չէր ներգործել կյանքի բնականոն ընթացքի վրա եւ բարեփոխել այն, արծարծել մարդկային հույզերն ու զգացմունքները, ստեղծել իրական կյանքի կենդանի պատկերներ, առաջադրել նոր գաղափարներ ու գեղագիտական խնդիրներ, սերունդներին հրամցնել նոր կենսափիլիսոփայություն, արժեւորել հայրենիքը, կերտել նախնիների ու ժամանակակիցների օրինակելի կերպարներ, դաստիարակել ազգային ոգի ու նկարագիր ունեցող սերունդ, որ պատրաստ լիներ սխրանքների, կորցրած պետականությունը վերականգնելու եւ ազգային վեհ նպատակներ իրագործելու:

Շարունակությունը՝ էջ 6



ԳԱՌՉՈՒ Կյանքը եւ գործունեությունը

Սկիզբը՝ էջ 3

Ինքը՝ Գառզուն, այս առնչությամբ ասել է հետեւյալը. «Ես հաճախ եմ մտաւտանջ-վել փակ դռներով սենյակների գաղափարի պատճառով: Այդ սենյակներում եղած մարդիկ կարծես կալանավորներ լինեն, ովքեր

ցանկանում են խոյս տալ իրենց ճակատագրից»:

Գառզունի մասին հետաքրքրական կարծիք են արտահայտել գեղագետներ Ռենե Զայգը եւ Պիեռ Կաբանը: Զայգը գրում է.

«Գառզուն իր արտահայտչամիջոցներով ստեղծում է մի տարօրինակ, գրավիչ ու անսպասելի մթնոլորտ, որը նրա արվեստը մի տեսակ թատերական է դարձնում: Նկարչի ստեղծած պատկերները կարծես հայտարարում են ինչ-որ ներկայացման սկսվելու մասին, որն այդպես էլ երբեք տեղի չի ունենալու: Գառզունի արվեստը կարծես ծիսակատարություն լինի»:

Ավելի խորքային է Պիեռ Կաբանի տեսակետը. «Մենք մուտք ենք գործում առանձնապես առեղծվածային մի միջավայր, մի երկիր, որտեղ անհամագոտությունն անընդհատ մեծանում է, տագնապի զգացողությունը դառնում է առավել ճնշող: Գառզուն այս ուղղագիծ քառսի մեջ նոր ժամանակների միակ մարգարեն է, ով կանխագուշակում է Հայտնությունը»:

Գառզունի մասին արտահայտվել է նաեւ Անդրե Վարնոն. «Առաջին իսկ հայացքից զգացվում է, որ Գառզուն զգոն նկարիչ է: Նա կառչում է սնուցող հողից: Այդ հողի վրա մարդու կամքը հարատեւելու ուժ է տալիս նույնիսկ այն ժամանակ, երբ դժոխքի աստվածները փորձում են նրան կայ-ծակնահար անել»:

Ֆրանսիան, մասնավորապես դրա մայրաքաղաքի մեղ փողոցները մոգական ուժով ներազդում են արվեստագետի մտքի եւ նրա տեսողական ընկալման վրա: Մոն-մարտրի արեւի ներքո նկարիչների տաղանդը ծաղկումը է ապրում առավել, քան որեւէ այլ տեղում: Ասվածը լիովին վերաբերում է նաեւ Գառնիկ Զուլումյանին: Թեեւ վերջինս հայտնի է դարձել առավելապես իբրեւ նկարազարդող, սակայն նա չի սահմանափակվել լույս այդ ժանրով:

Գառզուն համբավ է ձեռք բերել նկարա-

զարդելով Հեմինգուեյի ու Քամյուի գրքերը: Նշենք, որ Գառզունի ձեռագիրը բավականին հեշտ է ճանաչել. նրա յուրօրինակ կոմպոզիցիաները հագեցած են գաղափարներով, իսկ նրա արտահայտչամիջոցներն առավելագույնս տարողունակ են: Գառզուն գրքերի նկարազարդման արվեստը բարձրացրեց զարգացման սկզբունքներն նոր մակարդակի: Սփյուռքահայ նկարիչը մեծ վարպետություն է դրսևորել նաեւ այլ ժանրերում՝ մասնավորապես գեղանկարչության: Գառզուն աչքի էր ընկնում մեծ եռանդով եւ աշխատունակությամբ: Ուշագրավ են ֆրանսահայ արվեստագետի նկարազարդումները, որոնք արվել են ճեմապակու վրա: Առավել տպավորիչ են նրա փորագրանկարները: Սրանք իրապես արվեստի գլուխգործոցներ են: Զուլումյանը հաճույքով աշխատում էր ֆրանսիական թատրոններում՝ որպես նկարիչ: Գառզուն ձեւավորել է «Ֆրանսիա» ջերմամալի դիզայնը: 81 տարեկանում Զուլումյանը նկարազարդեց Մանուկյան գտնվող եկեղեցու ժամատունը: Պատկերազարդման ընդհանուր մակերեսը կազմում էր 600 քառակուսի մետր:

Հավելենք, որ Գառզուն շատ էր սիրում իր հայրենյաց երկիրը եւ դրան է նվիրել բավականին մեծ թվով գործեր: Վերջիններս հաճախ արտահայտում են նկարչի հոգեբանական ապրումները՝ կապված հայրենյաց երկրի ճակատագրի հետ: Վերջում մշենք, որ Հայաստանի ազգային պատկերասրահում ցուցադրված է մեծանուն նկարչի 305 գործ՝ հիմնականում նվիրաբերված հենց հեղինակի կողմից:

Տիգրան ՄԱՆՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Սկիզբը՝ էջ 5

Այս մտորումներից է ծնվում նոր գրական հերոսի խնդիրը, որ նույնպես շրջադարձային էր լինելու հայ նոր գրականության զարգացման ճանապարհին: Ի տարբերություն անցյալի գրողների եւ ժամանակով իրեն մոտ ու զուգահեռաբար գործող կլասիցիստ հեղինակների՝ Աբովյանն այդ հերոսին փնտրում ու գտնում է հենց ժողովրդական տարերքի մեջ: Այդ հերոսը պիտի լիներ ռոմանտիկ հեղինակի իղծերի եւ իղեալների մարմնավորողը, նրա առաջադիմական լավագույն իղեալների կրողն ու գաղափարական կրկնատիպը եւ ժողովրդի համար ճակատագրական պահերին իր վարքագծով ու հերոսական գործողություններով դառնար օրինակելի:

Բազմաթիվ արժանավորներից հերոս ընտրելիս հեղինակն ունեցել է բնականորոշ տատանումներ, որոնց մասին ընթերցողի հետ խոսում է անկեղծորեն. «Նրանց հետ հարիր հայ քաջի տղերք իրենց գլուխները բարձրացրին ու ամենքն էլ ուզում էին, որ իրանց ոտը գնամ, նրանցից շատերն էլ իլա սաղ-սալամաթ: Մեկ էլ իմ ջիվան Աղասին միտս ընկավ, Աղասին՝ աղքատ ու մեռած, ես նրա սուրբ գերեզմանին դուրբան, ասացի՝ կեղծավորություն չանեն, նրան ընտրեցի»: Ահա այս հերոսին է նա պանծացնում իր հանձնարի աճող զորությամբ՝ նրա կերպարում մարմնավորելով մարդկային ամենագեղեցիկ ու վսեմ հատկությունները: Իղեալական հերոսի այս տիպն էր, որ պիտի կտրեր բնության դրած զննչիլ՝ շղթան, բաց աներ հեղինակի «հչ քսան, այլ երեսուն տարվա փակ լեզուն», որ «լիդացվող Կրեսոս թագավորի մունջ որդու նման» աչքի առաջ ծնողի ստույգ մահը տեսնելով՝ բացականչեր. «Թող ինձ այսուհետ տգետ կոչեն, լեզուս բաց ա էլե, իմ ընտիր, ազիգ, իմ սրտի սիրեկան ազգ: Թող տրամաբանություն գիտեցողը իրան համբլարի համար գրի, ես՝ քո կորած, շվարած որդին՝ քեզ համար... Քանի բերանունս շունչ կա, փորումս՝ սիրտ, ես լեղապատառ ձեն կտամ.

— Էդ հմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չեն ճանաչում» (նույն տեղում, էջ 11):

Խ. Աբովյանն ուներ ինչպես իր սեփական լեզվական, այնպես էլ գրական քաղաքականությունը: «Հառաջաբանում» արծարծված կարեւոր խնդիրներից մեկն էլ հայ իրականության մեջ տարածում գտած

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809-1848) ԱԲՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ. ՆՐԱ ԲԵՐԱԾ ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

օտարալեզու աշուղական արվեստի դեմ պայքարի հարցն էր: Մեծ լուսավորիչը ցավ էր ապրում, երբ մեր ժողովրդին ընթերցասեր կամ արվեստասեր չէին համարում: Նա հակադարձում էր այդպիսիներին՝ մատնացույց անելով երկու իրողություն. նախ այն, որ ընթերցանության ուրիշ գիրք չունենալով՝ միայն ձեռքից խլելով կարող էին «Պղնձե քաղաքի» հիմար գիրքը, Փոնցիանոսի «Պատմությունը յոթ իմաստասիրաց»-ը կամ «Ռոբինզոնի պատմությունը» (նկատի ունի Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո» արկածային վեպը) եւ երկրորդ՝ ինչպիսի հիացմունքով էին հայերը հրապարակներում լսում «մի քոռ աշուղի՝ երգածն էլ թուրքերեն», որից «մեկ բառ էլ ա» չէին հասկանում բավական չէ, քիչ էր մնում «գրպանների փողն էլ, սրտներն էլ համեփն նրան տան»:

Ազգի ճշմարիտ լուսավորիչը ազգային մշակույթը օտարամուտ տարրերից զտելու, մեր ինքնությունն առաջ մղելու պատմական առաքելությունն ուներ նաեւ: Մեզ թերագնահատող օտարամուտ չարախոսները պնդում էին, թե հայությունն իբր ընթերցասեր եւ արվեստասեր չէ: Հակառակն էր հիմնավորում Աբովյանը՝ հետեւյալ իրողություններով: Մի կողմից՝ հազար առակ, զրույց ու հեքիաթ, տաղ ու խաղ իմացող մեր «հետին ռամիկ մարդը», մյուս կողմից՝ օտար տիրապետողների պալատներում հունարով, մշանավոր խաղ ասող բազմաթիվ աշուղները, որոնցից հիշում է միայն երկուսին. «Լավ գիտեի, որ թե Օսմանցվի, թե Ղզըբաշի երկրումը՝ ինչքան էնպես երեսելի, խելոք, հուճարով մարդ են էլել, ինչքան խանի, սուլթանի շահի դռներին սիրական աշըղ, լավ



խաղ ասող, ոտամավոր շինող մարդ են էլել, շատը Հայ ա էլել: Մենակ Քեշիշ օղին ու Քյոռ օղին բավական են, որ ասածն սուտ դուս չի գա» (նույն տեղում, էջ 7-8):

Իսկ Աբովյանի ժամանակակիցների մեջ՝ կրթված ու զարգացած, արդի քաղաքակրթության ու մարդկային հարաբերություններում անմրցելի հայը Գրիգոր Թադևադյանն էր. «Թող էսօր էլ մեկ մարդ Գրիգոր Թադևադյանի հետ խոսա. նրա ասած խոսքերն, նրա էն ճարտար լեզուն, նրա էն հիմնալի բոյն ու պատկերը, նրա հենց մեկ հունարը տեսնի, որ հարիր տեսակ զանազան մար-

դի ու ազգի՝ լեզուն, շարժումը, մտիկ վեր կենալը էնպես ցույց կտա, որ քոռանամ՝ թե եվրոպիոն էն ընտիր թատրոններումն էլ տեսած ըլիմ, ու վարժատան երես հո՛ իր օրումը՝ կարելի ա՛մ էն ժամանակն ըլի տեսած, որ այբբենը մեր միջումը գաբով էին բռնում կամ գյուլով վեր գցում, էն ժամանակ կիմանաք, թե Հայի միջումն ինչ հունար կա»: Ահա այս է կրթյալ ու լուսավորյալ հայի աբովյանական իղեալը:

Թյուրքալեզու աշուղական երգարվեստի դեմ պայքարելու, հայեցի արվեստ ստեղծելու նպատակով էլ նա գրեց իր ութ տասնյակ բայաթները, որ հայ մարդիկ «հայեվար ասեն»: «Խալխի սրտով» պիտի լիներ գրականությունը, նաեւ աշուղական արվեստը, որով ոգեւորված էր ժամանակի հանրությունը: Ահա ինչու «քիչ էր մնում», որ Աբովյանն ինքն էլ մի աշուղ դառնա, շրջի ժողովրդի մեջ, ինչպես աշուղները, հավաքի եւ գրառի հանրությանը հետաքրքրող, նրա «սրտի ուզած» պատմությունները:

Սովորաբար անտեսվում կամ քիչ է խոսվում «Հառաջաբանում» արծարծված մի այլ կարեւոր խնդրի մասին, որ սկզբունքային մշանակություն ունի նոր գրականության համար. դա հեղինակի անկեղծությամբ, սուբյեկտիվիզմի ու անհատականության, ստեղծագործական ոգեւորության խնդիրն է: Խ. Աբովյանը, իրոք «կրակված սրտով», իր ինքնախոստովանությամբ՝ ապագա հայ գրողներին կողմնորոշում է դեպի ստեղծագործական ոգեւորման գլխավոր աղբյուրը՝ հայրենիք ու Հայաստան: Նա է հեղինակի գաղափարական ու գեղագիտական նպատակների կիզակետը:

Շարունակությունը՝ էջ 8


Սաի 1243 թ. Բ ժողովն ու կանոնները

Սկիզբը՝ էջ 4

Անշուշտ, խոսքն Աթանաս Ալեքսանդրացու կանոնների մասին է (տե՛ս Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 282-289): Նրա կանոնները 88-ն են: Սուրբ Աթանասի կանոնախմբի մեջ եղող որոշումներն առանձնաբար վերաբերում են կնոջը (Ե), եղբայրների հարաբերություններին (ԻԹ): Մի քանի կանոն վերաբերում է մանուկների մկրտությանը (ԾԲ, ԾԳ, ԾԴ, ԿԹ, Հ, ՀԱ): Եվ սոցիալական այս խմբերի հետ զրուցելու արտահայտությունը մենք տեսնում ենք մաեւ ժողովի համապատասխան որոշման մեջ:

ԻԱ. «Ժողովուրդը կամավորությամբ ու խնդրանքով պետք է տա քահանաների հասը. ամեն ծառից ու բույսից պտուղներ, մատաղի մշամակված մասը, պսակի համար մվերներ, թաղմանը՝ հագուստ, ժամի դրամ. պատարագին վարձ չպետք է տան, այլ քահանային՝ հագուստ ու կերակուր, որ եկեղեցում աղոթքներով ու պատարագով զբաղվի» (Կիրակոս Գանձակեցի, էջ 220-221):

Հատ հետաքրքրական կանոններ են քահանայական կանոնները: Դա կարող ենք բացատրել այն փաստով, որ դրանք չեն սահմանափակվում՝ զուտ քահանաների պարտավորությունների ու գործունեության ոլորտները կարգավորելով: Դրանք վերաբերում են մաեւ ժողովուրդ-քահանա հարաբերություններին ու կարգավորում են մաեւ այդ ոլորտը: Ապացույցն էլ քահանայական այս կանոնն է, որի սահմանամբ ժողովուրդը պետք է տա քահանաների հասամեկը: Սակայն կանոնը հստակ մշում է, որ ժողովուրդը պետք է կամավորությամբ եւ խնդրանքով տա քահանայի հասամեկը: Հստակ չէ այն, թե «յոժարութեամբ» ասվա-



ծը ենթադրում է կամավոր սկզբունքներ, այսինքն՝ այս կանոնը բոլորին չի վերաբերում, այլ միան մրանց, ովքեր ցանկանում են, թե ուղղակի սահմանում է, որ պետք է առանց ավելորդ գործողությունների ու պատշաճ կերպով սահմանված ժամանակների տան քահանաների հասամեկը: Կանոնը մաեւ սահմանում է, որ պատարագի համար վարձ չպետք է տան, այլ քահանաներին պետք է ապահովեն հագուստով եւ կերակուրով: Եվ դա բնական է, քանի որ պատարագ կատարելը քահանայի սրբազնագույն պարտքն է, որը պետք է արվի առանց անձնական շահի եւ առավել եւս՝ վարձով: Բայց, իհարկե, ժողովուրդը կարող է օժանդակել քահանաներին հագուստով, որ մա եկեղեցում աղոթքներով ու պատարագով զբաղվի: Նաեւ պետք

է հավելենք, որ կանոնի առկայությունից պարզ է դառնում, որ այդ խառնակ ժամանակներում չի պահվել տասանորդի սկզբունքը, եւ մարդիկ, օգտվելով ժամանակաշրջանի անբարենպաստ իրավիճակից, չեն տվել քահանաների հասույթը, որը շատ կարեւոր էր այդ դժվարին ժամանակաշրջանում, որ հաստատ ու կանգուն մնա եկեղեցին:

ԻԲ. «Քահանաները ժողովրդի համապատասխան պետք է տուրք տան ժողովրդին սահմանված հասով եւ ըստ պատշաճի ընծաներով» (Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում):

Կարելի է ենթադրել, որ այս կանոնը մախորդի տրամաբանական շարունակությունն է: Եթե ԻԱ կանոնը սահմանում էր, որ ժողովուրդը տա քահանաների հասը,

ապա ԻԲ կանոնը հրամայում է, որ քահանաները, ըստ ժողովրդի ծխերի, պետք է տուրք տան եպիսկոպոսին՝ սահմանված կարգով: Ինչպես գիտենք, եպիսկոպոսն իր թեմի, վիճակի ղեկավարն է: Նա եկեղեցում շատ մեծ գործ է կատարում, եւ ժողովուրդն էլ իր հերթին պետք է օգնի մաեւ եպիսկոպոսներին, որ մա ըստ պատշաճի կարողանա իրականացնել իր գործունեությունը եւ ծառայել ժողովրդին: Եվ որպես հավելում՝ մշենք, որ այս կանոնը կարգավորում է եպիսկոպոս-քահանա հարաբերությունները՝ վերոնշյալ խնդրի վերաբերյալ: Եվ շատ պարզ էր մաեւ մի բան. եթե ժողովուրդը չի տվել քահանաների հասամեկը, ապա ինչպես պետք է վերջիններս տային եպիսկոպոսական հասը: Կամ եթե քահանաները մշտապես տված լինեին եպիսկոպոսների հասամեկը, ապա կանոն կլինեի միայն ժողովրդի վերաբերյալ, որ մրանք տան քահանաների հասամեկը, քանի որ այսպես թե այնպես քահանաները կտային եպիսկոպոսների հարկը: Սակայն, մեր կարծիքով, քահանաներն էլ իրենց հերթին օգտվել են ժամանակի անբարենպաստ լինելուց, եւ եթե նույնիսկ եղել են մարդիկ, որ վճարել են տասանորդը, քահանաները չեն տվել եպիսկոպոսների հասամեկը:

ԻԳ. «Եպիսկոպոսները պետք է հարկ տան հայրապետական աթոռին մշամակված հասով ու արժանավայել ընծաներով՝ ըստ կանոնների, որովհետեւ սուրբ Լուսավորիչը գրել է, որ քահանաները պետք է ժողովրդին տասանորդով հարկադրեն, եպիսկոպոսները՝ քահանաներին, իսկ հայրապետը՝ եպիսկոպոսներին:

Շարունակությունը՝ էջ 8

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ «ԻՄ ԿՅԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 5

Հոգվածագիրը ոչ միայն չի կարելուրում «Հուշիկների» գրությունը, այլեւ դրանք անվանում է հեղինակի գրական «նեյնիմներ»: Պռոշյանի նկատմամբ ընդգծված թշմանական վերաբերմունքը, անտարակույս, հանգեցնում էր գրական իրողության աղճատման: Այդ տեսակետից հատկապես մշելի է դրամատուրգ, գրական-հասարակական գործիչ Եմին Տեր-Գրիգորյանի՝ «Մշակին» ուղղված մի նամակը, ուր գրված է հետեւյալը. «...Այդ նույն «Հուշիկները» Պռոշյանը ուներ դեռ 1884-85 թվերին: Ես այդ հիշում եմ, որովհետեւ ես խնդրեցի այդ ժամանակ նրանից, որ մա թույլ տա տպագրությամբ հրատարակել, բայց պայմանների մեջ չհաշտվեցինք, եւ գործը հետաձգվեց մինչեւ այսօր» (նույն տեղում, հոկտեմբերի 27, թիվ 124, «Խառը լուրեր»):

Ժամանակագրական առումով «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրական երկին մախորդել էին Աղայանի ինքնակենսագրական մի շարք հոգվածներ՝ «Մի կտոր իմ ինքնապատում կենսագրությունից» (1889), «Մի երես մեր նորագույն պատմությունից» (1890), «Իմ տեսակցությունը Խրիմյան Հայրիկի հետ» (1892), իսկ 1866-ին մա արդեն գրել էր ինքնակենսագրական «Արություն եւ Մանվել» մշամավոր վեպը: Գրական այս աղբյուրները վկայում են, որ հուշագրություն գրելու համար հեղինակը բավական ժամանակ է տրամադրել եւ դրա շուրջ երկար խորհրդածել:

Երկի սկզբում Աղայանը մշում է, որ դեռեւ 1892 թ. ռուս գրականագետ Յուրի Վեսելովսկին նամակով խնդրել է իրեն՝ ուղարկել իր համառոտ կենսագրությունը, սակայն ժամանակի սղության պատճառով չի կարողացել կատարել նրա խնդրանքը: 1893-ին լույս է տեսնում Յու. Վեսելովսկու «Հայ արձակագիրներ» («Армянские беллетристы») ժողովածուի առաջին հա-

տորը, ուր գետեղված էին Աղայանի որոշ գործեր: Վեսելովսկին ցանկանում էր հայ գրողի կենսագրությունն ընդգրկել գրքի առաջին հատորում: Աղայանի՝ 1893 թ. փետրվարի 15-ին Յու. Վեսելովսկուն հասցեագրված մի նամակում կարդում ենք. «Ես չեի կարող իսկույն Ձեր առաջարկությունը կատարել, պետք է շտապով ետ դառնայի գյուղ, այս պատճառով նամակը հանձնեցի պ. Շիրվանզադեին եւ խնդրեցի, որ կատարե Ձեր առաջարկությունը: Նա հանձն առավ, եւ ես ալ միամտվեցա: Բայց այսօր ահա իմացա, որ մա ոչինչ չի գրել՝ նրա համար իբր թե ուշ է համարել, որովհետեւ կարդացել է «Նոր-Դար»-ում, որ ժողովածուն արդեն մամուլի տակ է եւ այս օրերս լույս կտեսնի: ...Ես հիմա գրում եմ իմ կենսագրությունը եւ շուտով տպագրության կտամ» (Աղայան Ղ., Երկերի ժող. չորս հատորով, հ. 4., Եր., 1962-63, էջ 530: Այսուհետ այս հրատարակությունից (1962-1963) բերված մեջբերումների հատորներն ու էջերը միայն կնշվեն):


Կես դար ապրած եւ արդեն կայացած գրող Աղայանը գրել է իր կյանքի գլխավոր դեպքերի մասին՝ կենսական փորձառություններն ուրիշներին կտակելու մտածումով: Նա այս ժամրատեսակին է դիմել պատկառելի տարիքում՝ ինքնախոստովանության պես գրելով. «Մարդիկ սովորաբար հետաձգում են իրենց կյանքի եւ կտակի գրելը, ենթադրելով, որ դեռ ապրելու են, ուրեմն եւ ժամանակ կունենան այդ բանն անելու՝ մոռանալով ավետարանի ասածը, թե՛ «Ոչ գիտես յորում ամուսնացած գրաչ»: Հուշագրական այս երկը սոսկ կենսագրական փաստերի վավերագրություն չէ. չմոռանա, որ դրա հեղինակը ճանաչված գրող է, եւ այն համապարփակ պատկերացում է տալիս ժամանակաշրջանի հայ կյանքի, կենցաղի, բարքերի մասին, տարբեր դեպքերի միջոցով բացահայտում մի շարք


իրադարձություններ ու անձանց, պատկերացում տալիս գրողի կրոնական ու քաղաքական հանգումներին, մշակության եւ հասարակական-քաղաքական գործիչների հետ ունեցած առնչությունների մասին: Թեեւ հեղինակն առանձին դիմանկարներ չի ստեղծել, այնուամենայնիվ անդրադարձել է ժամանակի հայ գրական, հոգեւոր կյանքում հայտնի անձանց եւ բնութագրել նրանց: Այդ նկարագրություններն ու բնութագրումներն այնքան կենդանի են եւ դիպուկ, որ հաճախ մոտենում են գրական դիմանկարի ժանրին:

Աղայանի հուշագրությունն աչքի է ընկնում պարզ կառուցվածքով, անկեղծ ու անմիջական շարադրանքով: Գրական այս երկը, եթե կարելի է այսպես ասել, «եսակենտրոն» է. հիմնական իրադարձությունները ծավալվում են հեղինակի անձի շուրջ եւ ուղեկցվում են նրա մերաշխարհի եւ հոգեկան ապրումների բացահայտումներով, երբեմն՝ ստեղծագործական ընթացքի մասին անձնական գնահատությամբ:

Անձնական մերգագցումների գերակշռությունը միեւնույն ժամանակ զուգորդված է իրականության, մասնավորապես ազգային կյանքի, ավանդական գյուղական իրականության, ընտանեկան հարաբերությունների ճանաչողության հարուստ եւ հետաքրքրական դրվագներով: Գրական այս երկին հատուկ հմայք են հաղորդում արկածային դրվագները, որոնք էլ ավելի հետաքրքրական ընթացք են հաղորդում նյութի ընթերցմանը: «Աղայանի ինքնակենսագրության հուզական-բանաստեղծական ոճը հաճախ խախտում է պատմության ժամանակագրական ընթացքը: Ինչ-որ ասոցիացիաների միջոցով Աղայանը հեշտությամբ թռչում անցնում է մանկությունից դեպի ապագա եւ հակառակը» (այս մասին մանրամասն տես Մարգարիտ Հ., Ակնարկային գրականության ժանրերը, «Գրական ժանրեր, Պատմական զարգացումը եւ ժամանակակից վիճակը», Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 481),- նկատել է Հ. Մարգարիտ:

Շարունակությունը՝ էջ 8





Սսի 1243 թ. Բ ժողովն ու կանոնները

Սկիզբը՝ էջ 7

Արդ՝ եթե այդ չեք անում, չափավոր արեք, եւ պակասը տասանորդի, որ գրեցինք, ուրախությամբ տվեք իբրեւ օրհնություն եւ ոչ թե ազահության համար, որպեսզի աթոռները հաստատ ու անկարիք, իսկ եկեղեցիները պայծառ մնան, եւ Աստծու օրհնությունը խառնվի ձեր արդար արդյունքին, քանի որ այն Աստծուն եք տալիս եւ ոչ թե մարդուն, եւ մարդու երես մի տաք» (Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում): Այս կանոնն էլ խորքում մախորդի շարունակությունն է, որը սահմանում է, որ իր հերթին եպիսկոպոսներն էլ պետք է հարկ տան հայրապետական աթոռին, քանի որ սուրբ Գրիգոր Լուսավորիչն է գրել, որ քահանաները պետք է ժողովրդին տասանորդով հարկադրեն, եպիսկոպոսները՝ քահանաներին, իսկ հայրապետն էլ՝ եպիսկոպոսներին: Եվ ինչպես տեսնում ենք, այս կանոնի մեջ չկա նշված «յօժար կամօք» կամ «յօժարութեամբ» եզրը: Եվ կարծես այս կանոնով լուծվեց ԻԱ կանոնի մեջ տարակարծություն առաջացրած «յօժարութեամբ» եզրի հասկացման խնդիրը: Եվ իրոք, ինչպես մեզ հայտնի է Յայոց Եկեղեցու պատմության մախընթաց դեպքերի շարադրանքից, շատ վաղ ժամանակաշրջանից էլ գործել է ժողովրդի վրա դրված տասանորդի հարկը՝ ըստ ամեն մեկի կարողության: Եթե փորձենք թեւածել ավելի վաղ տեղի ունեցած դեպքերի ժամանակագրության խորքը, կտեսնենք, որ տասանորդն ունի հիմնականաբան հենք եւ գործածվել է այդ ժամանակներից ի վեր (Մաղաք. Գ. 10, Նեեմ. Ժ. 38, Թվոց ԺԸ. 26, Ա Մնաց. ԻԶ. 20, Բ Մնաց. ԼԱ. 10): Կանոնը նաեւ հստակ սահմանում է, որ եթե տասանորդը պակաս է, թող մեծ ուրախությամբ ու օրհնությամբ տան, որովհետեւ դա աթոռների հաստատության համար է, եւ մտածեն, որ դա Աստծուն են տալիս եւ ոչ թե մարդուն, եւ հարկ չկա ոչ մի մարդու երես տալու: Եվ սա վերջին կանոնն էր, որ վերաբերում էր ժողովուրդ-քահանա-եպիսկոպոս-հայրապետ շղթայական կապին եւ լուծում էր շատ կարեւոր ու ճշմանակալից խնդիրներ: Սսի 1243 թ. Բ ժողովի կանոններից վերջին երկուսը լատինական եկեղեցու սիրտը չափելու համար զիջողական կանոններ են: Կոստանդին կաթողիկոսի եւ Շեթուն թագավորի շրջանը լատինականության հանդեպ զիջողությունների ժամանակն էր՝ այն ակնկալությամբ, թե Արեւմուտքից զինվորական

օգնություն եւ քաղաքական հովանավորություն կլինեին Արեւելքի թաթարների եւ Հարավի եգիպտացիների դեմ պայքարում: Մաղաքիա սրբազան Օրմանյանը փաստում է. «Պահլավունիներուն օրով ինչ-ինչ լատին արարողութիւններ կըցան անեցուիլ իբրեւ նորութիւն, այլ փոփոխութիւններ տեղի չունեցան» (Օրմանեան Մ., Բ, ս. 1908): Եվ Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսի օրոք սկսեցին փոփոխություններ կատարվել: Թեպետ այդ փոփոխությունները վերաբերում էին երկրորդական խնդիրների, սակայն այն հիմք հանդիսացավ, որ հետզհետե զիջողական փոփոխությունները կարելու կետերի վրա էլ տարածվեն: Բարձրաբերդցու զիջողությունները Սսի ժողովի վերջին երկու գլուխներն են:

Վարդան վարդապետը ու նրա հետ կաթողիկոսի կողմից դեպի Արեւելք ուղարկվածները եկան եւ շրջելով Հայաստանի գավառներում՝ եպիսկոպոսների, վանականների, իշխանների մեջ, բոլորին տվեցին կանոնական հրամանները եւ ամենքից գրավոր համաձայնություն պահանջեցին դրված կանոնների համար: Եվ քանի որ ամեն ոք խոտորված էր ճշմարտությունից, նրանց ծանր թվաց հրամանը, բայց չհանդգնեցին արհամարհել, այլ առերես մեծարեցին եւ երդումով ու անեծքով հրամանը կատարելու ստորագրություն տվեցին Կարին քաղաքի Սարգիս եպիսկոպոսը, Ամիրի եպիսկոպոս մյուս Սարգիսը, եպիսկոպոս Հակոբը, Բջնու եպիսկոպոսներ Վանականն ու Գրիգորը, Ամբերդի եպիսկոպոս Մկրտիչը, Հաղպատի եպիսկոպոս Համազասպը եւ այլ եպիսկոպոսներ, որ գտնվում էին զանազան կողմերում: Նաեւ գլխավոր վանքերը՝ Սանահինը, Գետիկը, Հաղարծիքը, Կեչառուքը, Հավուցթառը, Այրիվանքը, Հովհանավանքը, Սաղմոսավանքը, Հռոժմուսի վանքը եւ սրանց շուրջ գտնվողները: Նաեւ Աղվանքի կաթողիկոս տեր Ներսեսը, Տվեցի կոչված Հովհաննես եպիսկոպոսը, հռչակավոր մեծ Վանական վարդապետը, իշխանաց իշխան Ավագն ու այլ իշխաններ: Եվ Վարդան Արեւելքին, առնելով այս հավանության թուղթը, ուղարկում է Հռոմկլա՝ Կոստանդին կաթողիկոսին, իսկ ինքը գալիս է Կայանի ձորը: Այստեղ հաստատվելով՝ ուսուցանեց շատերին, որոնք աշակերտում էին նրա վարդապետական խոսքին:

Գրռ ԳԱՆՍՏԱՆ

ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809-1848) ԱԲՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ. ՆՐԱ ԲԵՐԱԾ ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 6

Ամբողջ գիշերը գրելու վայելքից ու տառապանքից հետո՝ առավոտյան, երբ արդեն ճանապարհել էր պատահաբար հայտնված մանկական մտերիմ բարեկամ դոկտոր Աղաֆոն Սմբատյանին, ով առաջին ընթերցողը լինելով՝ հավանել էր իր գրածը եւ իրեն քաջալերել ասելով. «Թե եղպես կշարունակեք՝ հիանալի բան կդառնա», սկսվում է բուռն ոգեւորությունը. «Սիաթի տասն էր առավոտի: Էլ հաց, կերակուր միտքս չէկան: Ճանճը առջեւս անցնելիս ուզում էի թե սպանեմ, էնպես էի վառվել: Հայաստան հրեշտակի պես առաջիս կանգնել, ինձ թեւ էր տալիս: Ծնող, տուն, երեխայություն, ասած, լսած բաներ էնպես էին կենդանացել, որ էլ աշխարհը միտս չէր գալիս: Ինչ խուլ, կորած մոլորած մտքեր ունեի, բոլորը բացվել, ես էին եկել: Նոր էի իմանում, որ գրաբառ ու ուրիշ լեզվներ միմյեւ էն սիաթը միտքս փակել, բխովել էին: Ինչ որ ասում կամ գրում էի միմյեւ էն հադաղը, գողացած կամ հնարած բաներ էին, էնորս համար հենց մեկ երես գրում էի թե չէ, յա քունս էր տանում, յա ձեռս բեզարում: Գիշերվան միմյեւ սիաթի հիմքը ոչ հացի մտիկ արի, ոչ չայի. չիրովսն էր իմ կերակուրը, գրիչը իմ հացը» (նույն տեղում, էջ 7-8):

Նույն ինքնամոռաց բարձր ոգեւորության հրեղեն Պեգասն է նրան առաջնորդում իր գրական սխարանքի ճանապարհին, եւ ար-

դեն ընթերցողի վստահությունը շահած հեղինակը նրան իր հետ միասին աննկատ տանում է դեպի իր ստեղծած գեղարվեստա-



Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ 517 197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 16.08.2018 թ.

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ